ISSN 0002-306X. ՀԳԱԱ և ՀԱՊՀ Տեղ. Տեխն. գիտ. սերիա. 2016. Հ. LXIX, N 2.

# ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Լրացավ կառավարման և ավտոմատացման բնագավառի ճանաչված գիտնական, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Տեղեկատվական տեխնոլոգիաների և ավտոմատացման» ամբիոնի վարիչ, ՀՃԱ իսկական անդամ, տ.գ.դ., պրոֆ. Սարգիս Հովհաննեսի Սիմոնյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 45-ամյակը:

Սարգիս Սիմոնյանը, 1964 թ. ոսկե մեդալով ավարտելով Իջևան քաղաքի N 1 միջնակարգ դպրոցը (հիմնադրված նրա պապերի կողմից՝ դեռևս 1858թ.), ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Ավտոմատիկայի և հաշվողական տեխնիկայի ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1969 թ.՝ ստանալով ինժեներ-էլեկտրիկի որակավորում:

1969-1974 թթ. աշխատել է ԽՍՀՄ էներգետիկայի նախարարության Հայաստանի էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտում (ՀԷԳՀԻ)՝ սկզբում որպես ավագ ինժեներ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող:

1974-1977 թթ. Ս.Հ. Սիմոնյանը սովորել է ՀՀ Էներգետիկայի ԳՀԻ-ի, իսկ այնուհետև Ուկրաինայի ԳԱ-ի Էլեկտրադինամիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում, 1977 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը՝ Ուկրաինայի ԳԱ ակադեմիկոս Գ.Ե. Պուխովի և պրոֆ. Գ.Ի. Գրեզդովի ղեկավարությամբ:

1977-1978 թթ. Ս.Հ.Սիմոնյանը ԽՍՀՄ Գլխատոմէներգոյի «Էներգիա» ԳԱՄ Երևանի սեկտորի վարիչն էր, այնուհետև՝ ԽՍՀՄ Գազարդի էկոնոմիկայի ԳՀԻ Երևանի բաժանմունքի ավագ գիտաշխատող:

1978 թվից Ս.Հ. Սիմոնյանը ԵրՊԻ-ի հրավերով Տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետի «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա», «Ինֆորմատիկա և կառավարում» և «Չափիչ տեխնիկա և ինֆորմացիոն համակարգեր» ամբիոնների դոցենտ էր, 1995 թ.՝ ՀՊՃՀ պրոֆեսոր, 2002 թ.՝ պրոֆեսոր ՀՀ ԲՈՀ-ի շնորհմամբ:

1998 թ. Ս.Հ. Սիմոնյանն հիմնել և մինչև 2010թ. ղեկավարել է ՀՊՃՀ Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Տեխնիկական համակարգերի ինֆորմացիոն ապահովում» ամբիոնը: 2010 առ այսօր Ս.Հ. Սիմոնյանը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Քոմփյութերային համակարգերի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեղեկատվական տեխնոլոգիաների և ավտոմատացման» ամբիոնի վարիչն է, ինչպես նաև ամբիոնին կից «Համակարգային վերլուծություն» բազային գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարը:

Ս.Հ. Սիմոնյանի գիտական հետազոտությունները վերաբերում են կառավարման տեսությանը և պրակտիկային, օպտիմալացման եղանակներին և օպտիմալ կառավարման համակարգերին, ժամանակի իրական և արագացված մասշտաբներում զանազան տեխնոլոգիական գործընթացների կառավարմանը, հաշվողական մաթեմատիկային, դիֆերենցիալ ձևափոխություններին, հիբրիդ հաշվողական տեխնիկային և այլ բնագավառների: Գիտական հետազոտությունների այս լայն շրջանակից առանձնանում են հատկապես հետևյալ չորս հիմնական ոլորտները.

– օպտիմալ կառավարման տեսության մեջ լայնորեն հայտնի Ֆելդբաումի հիմնախնդիրի լուծումը՝ ընդհանրացված դրվածքով (թեկն. ատենախոս. «Դինամիկ օպտիմալացման խնդիրների հիբրիդ մոդելավորման որոշ հարցեր», 1977թ.),

– ոչ գծային ծրագրավորման դինամիկական զանազան խնդիրների լուծման նոր արդյունավետ մեթոդների և ալգորիթմների, ինչպես նաև մասնագիտացված հիբրիդ հաշվիչների սինթեզման հիմունքների մշակումը (դոկտ. ատենախոս՝ «Ոչ գծային ծրագրավորման դինամիկական խնդիրների մասնագիտացված հաշվիչների սինթեզման հիմունքները», 1993թ.),

– դիֆերենցիալ ձևափոխությունների՝ նորագույն օպերացիոն հաշվի մաթեմատիկական ապարատը ոչ դինամիկական համակարգերի վրա տարածելու սկզբունքորեն նոր մոտեցման հիմնավորումը և իրականացումը, դինամիկական համակարգերի բնագավառում այդ ձևափոխությունների տեսության զարգացումը (1986-2006թթ.),

– նոր արդյունավետ հաջորդական և զուգահեռ մեթոդների և ալգորիթմների մշակումը՝ դիֆերենցիալ ձևափոխությունների կիրառմամբ, դրանց հիման վրա աշխատող կիրառական ծրագրերի փաթեթների ստեղծումը՝ միապարամետրական ընդհանրացված հակադարձ մատրիցների որոշման, միապարամետրական գծային վերջավոր հավասարումների համակարգերի, միապարամետրական գծային և ոչ գծային մատրիցային հավասարումների լուծման համար (2006-2016 թթ.):

Այս ամենի արդյունքում Ս.Հ. Սիմոնյանի կողմից ձևավորվել և զարգացվել է գիտական նոր ուղղություն, ստեղծվել է գիտական դպրոց (1986-2016թ.թ.):

Ս.Հ. Սիմոնյանի ստացած գիտական արդյունքների մի մասը տպագրվել է “Электронное моделирование” միջազգային հանդեսում, ինչպես նաև ԱՄՆ-ում լույս տեսնող “Engineering Simulation” պարբերականում:

Պրոֆ. Ս.Հ. Սիմոնյանը 40-ից ավելի զեկուցումներով հանդես է եկել միջազգային, համամիութենական և հանրապետական զանազան գիտաժողովներում:

Ս.Հ. Սիմոնյանը նաև գիտության բնագավառի հմուտ կազմակերպիչ է: Դեռևս 1998թ. նա ՀՊՃՀ-ում հիմնադրել և մինչև 2011 թ. խմբագրել է “Моделирование, оптимизация, управление” գիտական հոդվածների ժողովածուն (2003թ. ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդգրկվել է գիտական պարբերականների ցանկում): 2004 թվից այն հրատարակվում էր որպես ՀՊՃՀ Լրաբերի “Моделирование, оптимизация, управление” սերիա, իսկ 2012 թվ-ից՝ որպես ՀՊՃՀ (ՀԱՊՀ) Բանբերի սերիա՝ “Информационные технологии, электроника, радиотехник-а” խորագրով, որի աշխատանքները ևս ղեկավարում է պրոֆ. Ս.Հ. Սիմոնյանը: Հանդեսը

կարևորագույն դեր է խաղացել բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունների և նրանց հեղինակների կայացման գործում:

Պրոֆ. Ս.Հ. Սիմոնյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 23 թեկնածուական և 35 մագիստրոսական ատենախոսություններ: Նրա գիտական խորհրդատվությամբ պաշտպանվել են նաև 3 դոկտորական ատենախոսություններ: Ս. Սիմոնյանը 250-ից ավելի գիտաուսումնամեթոդական աշխատությունների՝ այդ թվում՝ 180 գիտական աշխատանքների, 5 մենագրությունների և 5 գյուտերի հեղինակ (համահեղինակ) է: Ղեկավարել է 8 պայմանագրային թեմաներ, որոնց արդյունքները ներդրվել են ԽՍՀՄ ռազմական արդյունաբերության տարբեր ոլորտներում: Նրա կողմից կատարված 10 պետբյուջետային թեմաների շրջանակներում ստացվել են կարևորագույն գիտական արդյունքներ, որոնք հրատարակված են Հայաստանի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Հարավային Կորեայի առաջատար գիտական հանդեսներում:

Հարուստ է նաև Ս.Հ. Սիմոնյանի ուսումնամեթոդական աշխատանքների ցանկը. նա հեղինակ և համահեղինակ է 40-ից ավելի աշխատանքների՝ դասագրքեր, թեստային հարցերի և խնդիրների շտեմարաններ, ուսումնական ձեռնարկներ, եռալեզու բացատրական բառարան և այլն:

Ս.Հ. Սիմոնյանը ակտիվ հասարակական գործիչ է. նա ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագրի և ՀՀ ՃԱ Լրաբերի խմբագրական խորհուրդների անդամ է, ՀՀ ԳԱԱ-ի «Գիտության աշխարհում» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, ՀՀ ԿԳՆ տեխնիկական գիտությունների փորձագիտական հանձնաժողովի անդամ, ՀԱՊՀ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության 032 Մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ, ՀԱՊՀ-ի գիտատեխնիկական խորհրդի նախագահի տեղակալ և այլն:

Իր բազմամյա բեղմնավոր գիտամանկավարժական գործունեության համար պարգևատրվել է ՀՊՃՀ վաստակագրով, ՀՀ ԿԳՆ պատվոգրով, ՀՃԱ Պատվո նշան մեդալներով, ՀՊՃՀ Ոսկե հուշամեդալով, ՀՀ Վարչապետի շնորհակալագրերով, ՀՀ ԿԳՆ Ոսկե հուշամեդալով: Ճանաչվել է ՀՊՃՀ զանազան մրցույթների հաղթող (լավագույն մենագրությունների, գիտական աշխատանքների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների համար): 2011թ. ծննդյան 65-ամյակի կապակցությամբ Ս.Հ. Սիմոնյանը ՀՀ Նախագահի հրամանագրով արժանացել է «ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչման, իսկ 2014 և 2015 թթ. ընդգրկվել է ՀՀ բարձր արդյունավետությամբ աշխատող 100 գիտաշխատողների շարքում:

Այսօր էլ պրոֆ. Ս.Հ. Սիմոնյանն ակտիվորեն շարունակում է զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ ինչպես գիտական հետազոտությունների, այնպես էլ երիտասարդ բարձրորակ կադրերի պատրաստման ասպարեզներում:

***Հանդեսի խմբագրական խորհուրդը շնորհավորում է Սարգիս Հովհաննեսի Սիմոնյանին հոբելյանի կապակցությամբ և ցանկանում նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:***